



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

GRAD
EREN
2705
BUHR

ԲՐԻՍՏՈՒԷԼԱՆ


ՎԱՐՎԱՅԻՆ ՏՈՒԹՅՈՒՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԵՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԿԱԵԼՏԻՍԵԱՆ

1845 — ՌՄՂԲ



Գ Լ Ս Ի Ը Բ Ը Կ Ո Ւ Թ Ի Դ Ե
Մ Ը Ն Կ Ը Ն Ց

Թ Ի Ի Դ

Ք Բ Ի Ս Տ Ո Ն Ի Ը Կ Ը Ն

Վ Լ Բ Ի Ը Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն
Գ Բ Ի Դ Ո Բ Ա Պ Ը Ա Ե Ն Ը Ն Ի
Կարգաթիվ <u>2613</u>

Teroyants, Hovhannes Prusatsi
Kristoneakan Vardapetutiwn

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԼԵՌՕՏԵԱԼ Ի ՊԷՏՍ ԴՊՐԵՏԵՆՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ Յ. Զ. Պ.

ՀՐԵՄԵՆԵԼԻ

ԱՄԵՆԱԳԱՏԻ ՍՐԲԱԶԱՆ ԳԱՏՐԻԱՐԳԻ
ՏԵԱՌՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՐՈՅ ԱՌԱԲԵԼԱՇԱԻՂ
ԱՐԲ ԵԳԻՍԿՈԳՈՍԻ



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

1843 — ՌՄՂԲ

Grad

EREN

2705

BUHR

ՀԱՄԱՌՈՑ ՎԼՐՅՈՒԹԻՒՆ

ՄԵԿ ՏՂԱՅԻ ՄԸ

ԻՐ ԿՐՕՆԸ ԳԻՏԵԱԼՈՒ ՎՐԱՅ

Հ. Ա՛ էկ մարդ մը քրիստոնեայ ըլլալու ի՛նչ պէտք է :

Գ. Ա՛ մենասուրբ երրորդութեան անունովը մը կրթութիւն՝ և եկեղեցւոյ եօթը խորհուրդը ճանչնալու՝ և հաւատոյ հանդանակին մէջ ի՛նչ որ գրոված է նէ՛ կատարեալ հաւատալու՝ և եկեղեցւոյ պատուիրանքները պահելու է :

Հ. Ա՛ մենասուրբ երրորդութիւն ըսելով ի՛նչ կը հասկընամք :

Գ. Ա՛յն կը հասկընամք որ՝ Ա՛ստուած մէկ է , և երեք անձինք է՝ Հայր , Արդի , և Հոգի սուրբ . և որդին թէպէտ հօր աստուծոյ որդի է , բայց մարմնաւոր զաւակներու պէս ծնած չէ՛ . այլ ինչպէս որ մարդուս միտքը խօսք կը ծնանի , որ իր ծնողը քանի որ կայ նէ՛ ինքն ալ կայ և միշտ կը ծնանի . և ասոր Հօր աստուծոյ համազոյական և յաւիտենակից՝ և Ռան աստուծոյ կամ Ռանն աստուած կըսեմք . քանզի հօր աստուծոյ բանն է՛ և ինքն ալ աստուած է :

Յովհաննու աւետարանչին ըսածն ալ այս է . « Ի

ակղբանէ էր բանն Կ. քանզի հօր բան ըլլալով՝ քանի որ հայր կայ նէ՛ բանն ալ կայ : « Եւ բանն էր առ աստուած Կ. գէրէ մարմնաւոր ծննդեան պէս չէ՛ , որ ծընողէն գատովի : « Եւ աստուած էր բանն Կ. իր ծնողէն զատ էութիւն և գոյութիւն չունենալուն համար , և այս պատճառիս համար Համագոյակից հօր կրավի . որ է հօր աստուծոյ հետ մէկ գոյութիւն ունեցող :

Հոգին սուրբ ալ հօր աստուծոյ հոգին կամ չուննէ . ուստի քանի որ հայր կայ՝ հոգի ալ կայ , և հօր և որդւոյ հետ մէկ բնութիւն և էութիւն ունի . ուստի հոգին սուրբ ալ համագոյակից կրավի հօր և որդւոյ :

2. Յիսուս քրիստոս աստուած կրսեմքնէ այն ի նչէ :

9. Որդի աստուծոյ և բանն աստուած ըսածնիս է , որ հօր աստուծոյ համագոյակից յաւիտենական աստուած ըլլալով՝ մարդս դժոխքէն և սատանայի գերութենէն ազատելու համար , հոգի միտք և մարմին առաւ , իր աստուածային անձին հետ միացոյց , կատարեալ մարդ եղաւ , չէ՛ թէ՛ ինչպէս որ երբեմն հրեշտակները մարմին ունեցածի պէս աչքի կերեւան . և իրենք ճշմարիտ մարմին չունին . այլ քրիստոսի մարմինը ճշմարիտ էր . սուրբ մարիամ կոյսէն ծնաւ , որ ասոր համար աստուածածին կրավի . և աստուածածին կոյս մնաց , որով և նոյն իսկ ծնունդը հրաշք էր . և ծնած ատենը՝ Յիսուս անուն դրվեցաւ իրեն՝ հրեշտակին պատուիրելով , որ փրկիչ ըսել է . և մարդկային բնութիւնն ալ աստուածային անձին հետ միանալովը՝ Վրիստոս ըսվեցաւ՝ որ օծեալ ըսել է . և Վրիստոս մարմին առնելէն ետքը՝ բուն իսկ իւր բնութեամբը արդարութիւն ըլլալով , և մարդս արդարացրնելու և մեղքէ ազատելու համար մարդ եղած ըլլալով՝ առանց մեղք մը գործելու , մարդոյս մեղաց պատիժ տէի տրված բոլոր նեղութիւննե-

ըր քաշեց , յոգնեցաւ , անօթեցաւ , սրտմեցաւ , լա-
ցաւ , և վերջապէս չարչարանք քաշեց , խաչվեցաւ ,
Թաղվեցաւ , և երրորդ օրը յարութիւն առաւ :

Խաչին վրան հոգին աւանդելէն ետքը՝ հոգւովը
դժոխքը իջաւ , այն տեղը սատանայի գերի եղած հոգի-
ները գերութենէն ազատեց , և յարութիւն առնելէն
ետքը՝ առաքեալներուն պատուիրեց , որ իրեն աստուա-
ծութիւնը , քարոզած վարդապետութիւնները , բոլոր
աշխարհք պրտըտին քարոզեն , և հաւատացեալները ա-
մենասուրբ երրորդութեան անունովը մկրտեն . զի
վճիռ ըրած էր որ՝ չի մկրտվողը արքայութիւն չի կրնար
մանել :

Եւ որովհետեւ մկրտութեան գորութեամբ նէ որ՝
եկեղեցւոյ անդամ կրլանք , ուստի եկեղեցւոյ անդամ
չեղող մարդը , այսինքն՝ քրիստոսի առաքեալներուն քա-
րոզած , և այն ատենէն մինչեւ մեզի հասած վարդապե-
տութեանը չի հաւատացող և չի մկրտվող մարդը փր-
կութեան չի հասնիր , արքայութիւն չերթար :

Է. Ենանկ է նէ՝ մէկ մարդ մը մկրտվելէն ետքը ,
հարկաւ արքայութիւն պիտի երթայ :

Գ. Չէ՝ չի մկրտված մարդը արքայութիւն չերթա-
լէն՝ այն չի հետեւիր , որ մկրտվածն ալ արքայութիւն
երթայ . հարկ է որ եկեղեցին ինչի կը հաւատայ նէ , ին-
քըն ալ անոր հաւատայ անկեղծ սրտիւ , և իր հաւատ-
քը բարեգործութեամբ և առաքինութեամբ կենդա-
նի պահէ :

Եւ որովհետեւ մարդ մեղք գործէ նէ՝ աստուծոյ
չնորհացը դէմ ապերախտութիւն ըրած կրլայ , որով-
հետեւ որդւոյն աստուծոյ մարդանալոյն՝ և իրեն
փրկութեանը համար արիւն Թափելուն և մեռնելուն
դէմ , ինքը նորէն իր կամօքը սատանային կը ծառայէ .

ուստի պէտք է որ աստուծոյ հետ հաշտըլի. և այս բա-
նիս համար աստուած քահանաները իրեն եկեղեցւոյն
մէջ իրեն փոխանորդ է դրեր. հարկ է որ իր մեղքին վը-
րան զըլայ, և աստուծոյ առաջը խոստովանածի պէս այն
քահանային խոստովանի. և մէկ մըն ալ մեղքով աստու-
ած չի բարկացունելու դիտաւորութեամբ աստուծոյ
հետ հաշտըլի. և այս հաշտութիւնս քահանային տը-
ված արձակումովը կրլայ, և խոնարհութեամբ քա-
հանային դրած ապաշխարութեանը յանձնառու ը-
լայ և կատարէ :

Եւ որովհետեւ իր մեղքը եկեղեցւոյ հաղորդու-
թենէն կրտորված կրլայ, ապաշխարելէն ետքը քրիս-
տոսի մարմինը և արիւնը առնելով, նորէն քրիստոսի
եկեղեցւոյն շնորհացը հաղորդ կրլայ, և առաջին սըր-
բութիւնը կրտանայ. և քրիստոսի մարմնոյ և արեան
հաղորդութիւնն ալ ամմէն քրիստոնէի հոգեւոր փըր-
կութեանը համար հարկաւոր է. և ասոնք ընելով եկե-
ղեցւոյ հետ միացեալ կրմնայ :

2. Եկեղեցին ի՞նչ է :

9. Եկեղեցին հաւատացելոց միութիւնն է, որ ամ-
մէնքն ալ մէկ ճշմարիտ աստուած կը դաւանին, և նոյն
աստուծոյ սորվեցուցած ճշմարիտ կրօնքը կրնդ ունին.
և ճշմարիտ կրօնքը և անիկայ սորվեցընող աստուածը
մէկ է, և եկեղեցւոյ գլուխը քրիստոս մէկ է, անոր
համար եկեղեցին ալ մէկ է. հերետիկոսութիւնով կամ
անհնազանդութիւնով ասկէց զատվածները եկեղեցի-
էն դուրս կրմնան. բայց զատ եկեղեցի մըն ալ անոնք
չին բաղկացընը, որքան շատ կրլան նէ ըլլան. գէրէ
քրիստոս կրսէ՝ « Եթէ եկեղեցւոյն ո՛չ լուիցէ՝ եղիցի՝
քեզ իբրեւ գհեթանոս և զմաքսաւոր » :

Եկեղեցին սուրբ է՝ քանզի սորվեցուցած ճշմար-

տուժիւնները և տրված խրատները և խորհուրդնե-
րը մարդս սրբելու համար են . և Քրիստոս որ է գլուխ
եկեղեցւոյ՝ ամենայն սրբութեանց աղբիւրն է . ուստի
ճշմարիտ սուրբ՝ ճշմարիտ եկեղեցւոյ մէջ կրլայ . եկե-
ղեցիէն դուրս գտնուող մարդոց իբրան որ վարքը ան-
մեղ և առաքինի ըլլաննէ՝ սուրբ չեն կրնար ըլլար . ուս-
տի սուրբ տէի վկայեալ հայրապետաց խօսքերն ալ կրն-
դունիմք . քանզի եկեղեցին անոնց սուրբ ըսելով՝
թէ հաւատոյ դաւանութիւննին և թէ վարքերնին ըն-
դուներ է , և մենք չընդունելով եկեղեցիէն զատված
կրլանք :

չ. Եկեղեցւոյ խորհուրդները ի՞նչ են :

գ. Քրիստոս եկեղեցւոյ անդամներուն ատեն ա-
տեն մէկ մէկ կերպ շնորհք կուտայ եկեղեցւոյ մէջ ի-
րեն փոխանորդ ձգածներուն միջնորդութեամբը . և
այս շնորհքներս տալու արտաքին նշաններուն խոր-
հուրդ կրսեմք . և այս խորհուրդներս եօթն են :

ա. Ակրտութիւն , որով մարդ եկեղեցւոյ անդամ
կրլայ :

բ. Իրոշմ , որով քրիստոնէական հաւատքը յայտ-
նի քարոզելու քաջութիւն մը կրստանայ :

գ. Հաղորդութիւն , որ հացի և գինւոյ երեւոյթ-
քով քրիստոսի իսկական մարմինն ու արիւնը քահանա-
յին ձեռքէն առնելով՝ որ նոյն իսկ Արքութիւնն է , ա-
նով կը սրբուի : Եւ թէպէտ հաղորդութեան խոր-
հուրդին վրայ՝ հացէն և գինիէն զատ բան չերեւիր
մեր աչքին , բայց քրիստոսի կենդանի և կենդանա-
րար մարմին և արիւնն է որ կը տեսնեմք և կը ճաշա-
կեմք . և կը խոստովանիմք՝ որ հացին ամմէն մէկ փրշ-
րանքը՝ և գինիին ամմէն մէկ կաթիլը , կատարեալ բը-
րիտաստի մարմին և արիւնն է :

4. Ապաշխարութիւն, մահացու մեղքք կենդանութեան աղբիւրէն գատվելով մեռած հոգիները այս խորհրդովս կը բժշկին, իրենց մեղքէն կատարեալ արտիւզըղջալով, և քահանային խոստովանելով, և անոր խրատները պահելով և հրամանը կատարելով, և արձակմանը արժանի ըլլալով. քանզի մինչեւ որ քահանայն ողորմեցցիին մէջ՝ « Ա՛րձա կե՛մ գ՛բեզ » չըտէ նե՛՛ մեղքը թողութիւն չի գրուներ :

5. Պատի, որով եկեղեցւոյ հոգեւոր զաւակ եւեւը ցընելու համար, եկեղեցին մարմնաւոր միութեան հրաման կուտայ :

6. Չեռնագրութիւն, որով եկեղեցւոյ պէտպէս գործքերը կատարելու, և աստուածային վարդապետութիւնը ժողովըրդեան քարոզելոյ՝ և խորհուրդները կատարելու պաշտօնեայններ կընարրվին : Եւ այս պաշտօնեայններուս մէջը իրարմէ վեր աստիճաններ բըրայուն համար, վար աստիճան ունեցողը իրմէ վեր աստիճանի գործ կատարելու իշխանութիւն չունի. այս խորհուրդիս կարգ ալ կըսվի :

7. Ա՛լ երջին օծումն, ծանր հիւանդաց վրայ քահանային աւետարան և աղօթքներ կարդալն է, որով հիւանդը աստուածային շնորհք իր նեղութիւններէն կազատի, և թէ որ մեղք մըն ալ ունի նե՛՛ թողութիւն կըգտնէ. բայց հոգին մեռցընող մեղքերը՝ որ մահացու կըսվին, առանց զրդման և խոստովանութեան միայն այս խորհրդովս թողութիւն չի գտներ. և թէ որ սրտանց զրդում ունի, բայց խոստովանելու ժամանակ չէ ունեցեր. կամ խոստովաներ է՝ և հոգւոյն կատարեալ մաքրութեանը պէտք ըլլալու ամաչալ լանքը չի քաշած մեռեր է նե՛՛, քիտտո՛ւ մահուանը և

արեանը արդիւնքովը, և անոր մահակից եղող սուրբ թուն արդիւնքովը՝ որ ասոնք ալ քրիստոսի արդիւնքն են, եկեղեցին ասոնց մաքրութեանը համար աղօթելով կրմաբրին, և անով արքայութեան ժառանգ կրլան, բայց թէ որ մահացու մեղօք՝ և անդեղ մեռած է նէ՛ եկեղեցւոյ աղօթքը անիկայ չի կրնար դատապարտութենէ ազատել:

Սկրտութիւնը ու դրոշմը, որ սուրբ Սեռոնով կօծէ քահանան մկրտված ժամանակնիս, մէկ անգամ պէտք է ամմէն քրիստոնէին՝ և ոչ աւելի:

Հաղորդութիւնը ու ապաշխարութիւնը, քանի անգամ որ մէկ քրիստոնեայ մը մեղք գործէ, և զզջջայ իր մեղքերուն վրայ քահանային խոստովանելով, այնքան անգամ ալ պիտի ապաշխարէ, և հաղորդվի:

Չեռնադրութեան կարգն ալ մէկ պաշտօն մըն է, որ մէկ մարդու միայն մէկ անգամ մը կրտրվի, որ եկեղեցին ուրիշ վեց խորհուրդները կատարէ:

Վերջին օծումն ալ, թէպէտ օծում ունի եղով, ինչպէս որ անունը կրցրցրնէ, և ուրիշ ազգ ալ կօծէ, բայց օծումը հարկաւոր չէ, և ասոր համար մեր եկեղեցին հիւանդը օծելու սովորութիւն չունի:

Էկատարեալ ճշմարիտ հաւատալիքները մէկ տեղ ժողովրդած գրքոված կան մի՛ որ միտք պահելու դիւրին ըլլայ:

9. Այն. Հանգանակ հաւատոյ կրտվի. և է այս.

“ Հաւատամք ՚ի մի Աստուած ՚ի Հայրն ամենա կալ՝ յարարիչն երկնի և երկրի, երեւելեաց և աներեւութից: Եւ ՚ի մի տէր (Յիսուս Քրիստոս Սրբին աստուծոյ՝ ծնեալն յաստուծոյ Հօրէ՛ միածին, այսինքն յեւթեանէ Հօր: Աստուած յաստուծոյ, լոյս ՚ի լոյսոյ, աստուած ճշմարիտ յաստուծոյ ճշմարտէ՛ ծը-

նունդ և ոչ արարած : Նոյն ինքն 'ի բնութենէ Հօր . որով ամենայն ինչ եղեւ յերկինս և 'ի վերայ երկրի , երեւելիք և աներեւոյթք : Արյաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ 'ի յերկնից՝ մարմնացաւ , մարդացաւ , ծնաւ կատարելապէս 'ի մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով : Արով էառ մարմին հոգի և միտ , և զամենայն որ ինչ է 'ի մարդ , ճշմարտապէս և ոչ կարծեօք : Չարչարեալ , խաչեալ , թաղեալ , յերրորդ աւուր յարուցեալ , ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր : Վալոց է նովին մարմնովն և փառօք Հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս , որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան : Հաւատամք և 'ի սուրբ Հոգին՝ յանեղն և 'ի կատարեալն , որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս : Ար էջն 'ի յորդանան , քարոզեաց զառաքեալ լին , և բնակեցաւ 'ի սուրբն : Հաւատամք և 'ի միմիայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի . 'ի մի մկրտութիւն , յապաշխարութիւն , 'ի քառութիւն և 'ի թողութիւն մեղաց : Վարութիւն մեռելոց , 'ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց , յարքայութիւնն երկնից և 'ի կեանսն յաւիտենականս :

Իսկ որք ասեն՝ էր երբեմն , յորժամ ոչ էր Արդի . կամ էր երբեմն , յորժամ ոչ էր սուրբ Հոգի . կամ թէ՛ յոչէից եղեն , կամ յայլմէ էութենէ ասեն լինել զորդին աստուծոյ և կամ զսուրբ Հոգին . և թէ՛ փոփոխելիք են կամ այլայլելիք , զայնպիսինն նոովն կաթուղիկէ և առաքելական եկեղեցի :

Ի սրբոյ Լուսուսքէն մերմէ ասացեալ :

Իսկ մեք փառաւորեացուք . որ յառաջ քան զյաւիտեանս , երկիրպագանելով սրբոյ Արրորդութեանն

և միոյ աստուածութեանն Հօր և Սրբուոյ և Հօգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտեանից ամէն ։

2. Հաւատքնիս կենդանի ըլլալու համար կատարելու պատուիրանքները որոնք են ։

9. Երկու տեսակ պատուիրանք կան . մէկն է տառնաբանեայ պատուիրանքը , որով բարքերնիս աղէկ կը նեկը , և դէշ կիրքերնիս կը զսպեկը . և երկրորդն է՝ եկեղեցւոյ պատուիրանք , որ ասոնք կատարելով մենք մեզ գործբով եկեղեցւոյ անդամ կը դաւանիմք ։

2. Տասնաբանեայ պատուիրանքները որն են ։

9. ա. « Սիրեցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ ։ » . և ասով կը պարտաւորիմք սիրել զաստուած և պաշտել , և անոր ըրած բարերարութիւնները , և բարերարութեան գործիքները և միջնորդները յարգել ։

Աստի կը յարգեմք և երկրպագութիւն կրնեմք խաչին , որ մեր փրկութեանը գործիք եղաւ , և քրիստոսի արիւնը վրան պղղչկեցաւ , և ասոր նշանը մեզի պարծանաց նշան տէի՝ բռնելով , մեր ամմէն գործոյն սկզբնաւորութեանը երեսնիս կը խաչակնքեմք ։

Կը պատուեմք սուրբ Աստուածածին կոյսը՝ որ քրիստոս որդին աստուծոյ անկեց մարմին առնելով՝ մենք ըստ մարմնոյ ալ աստուծոյ ազգակից ըլլալուն շունորհքը սուրբ աստուածածինէն ունիմք . քանզի աստուած մեզի այս շնորհքս հաղորդելու միջնորդ անիկայ ընտրեց ։

Կը պատուեմք Սուրբերը՝ որ իրենց քարոզութիւնովը և սուրբ վարքովը և նահատակութեամբ արիւն թափելով՝ քրիստոնէական հաւատքը մեզի սորվեցուցին և հաստատեցին , և աստուծոյ սիրելի ըլլալովն

անոնք մեռնելէն ետքն ալ աստուծոյ քով կենդանի են, և անոնց բարեխօսութեամբը աստուած մեզի շնորհքներ կրնէ . ուստի մենք ալ անոնք բարեխօս բռնելով աստուծամէ այն շնորհքը կուզեմք : Ինչպէս որ քրիստոսի աշխարհք գալէն առաջ ալ խորայեւացոց թագաւորին մէկը կաղաչէր, « Ա՛սան դաւթի սիրելոյ քո՝ մի՛ դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քում մէ » : Եւ աստուած ալ շատ տեղ իր սուրբերուն բարեխօսութեամբը, մեղաւորաց ողորմիլ կը խոստանայ :

Ա՛սոր համար սուրբերուն մարմիններէն մընացած մասունքներն ալ կը յարգեմք . քանզի այն մարմնովն էին սուրբերը՝ որ մեզի այն աղէկութիւնները ըրին : Աւստի մասունքները յարգելիս միայն երախտագիտութիւն մըն է, ասոնք մեր մեղքերնուս թողութիւն տալու կամ ուրիշ բան մը ընելու զօրութիւն ունին տէի չէ . թէպէտ աստուած երբեմն այս ոսկորներովս ալ հրաշքներ կրնէ, ինչպէս որ եղիսէի ոսկորներուն դպած մեռելը ողջնացուց :

Շրեշտակներն ալ այս մտքով կը յարգեմք . զէրէ աստուծոյ կամբը մեզի յայտնելու պաշտօնեայ են, և աստուած մեզ աներեւոյթ փորձութիւններէն պահպանելու համար՝ ասոնք վերակացու և պահապան դրած է :

բ. Պատուիրանք. « Ա՛յ առնուցուս զանուն աստուծոյ քո՛ ի վերայ սնտտեաց » . ասով կարգ իլէ պարապ տեղը աստուծոյ անունը բերան առնել, և սուտ տեղը կամ պէտք չեղած ատենը՝ իրաւ տեղն ալ երդում ընել . բայց երբոր հարկը կը պահանջէ՝ կամ դատաստանի մէջ երդում ընելու՝ որով արդարութեան պատճառ մը պիտի ըլլայ երդումն, կամ ուրիշ ասոր պէս բաներու՝ երդում ընելը արգիլեալ չէ :

4. Պատուիրանք . “ Պատուեան զօր շաբաթունն ” .
որ քրիստոսի փառաւոր յարութեամբը և հոգւոյն սրբ
բոյ գալստեամբը , քրիստոնէից եկեղեցւոյ հաստատու
թեանը յիշատակի համար բոլոր քրիստոնեայք շաբա
թը կիրակիի փոխեցին :

Այս օրս պէտք է քրիստոնէին բոլոր աշխարհա
յին գործքերէն ետ կենալ , եկեղեցի երթալ , հասա
րակաց հետ աղօթել , աստուածային բանին քարոզու
թեանը մտիկ ընել , եկեղեցւոյ սուրբ խորհուրդնե
րը տեսնել , և ուրիշ ասոնց պէս հոգեւոր բաներու
պարապիլ : Աւ որովհետեւ եղբայրսիրութիւնն ալ քր
իստոնէից պարտականութիւնն է , սիրով բարեկա
մաց հետ տեսնելիլն ալ այս պատուիրանքիս դէմ չէ :

7. Պատուիրանք . “ Ա՛ր առնիցես քեզ կուռս ” .
դուն քեզի կուռք չի շինես . ըսել է որ աստուծոյ վայե
լած պատիւը՝ աստուծմէ զատ ուրիշ բանի չի տաս . և
թէ պէտ հիմա հիշ մէկ բանի մը քրիստոնեայները հա
ւատքով աստուածական զօրութիւն չին տար , բայց
ոմանք արծաթը , և ոմանք իրենց փորը և կիրքը աւելի
սիրելնուն համար կռապաշտի օրրա կանցնին , ինչպէս
որ առաքեալը կըսէ՝ “ Ա՛րծաթսիրութիւն՝ որ է կը
ռապաշտութիւն ” , և՝ “ Արոց աստուած որովայնն
իւրեանց է ” :

8. Պատուիրանք . “ Պատուեա՛ գհայր քո և զմայր ” :

9. Պատուիրանք . “ Ա՛ր սպանաներ ” , և այսպատուի
րանքիս տակը կը պարունակի մէկ մարդու մը բամբա
սանքով , և զըպարտութիւնով անունը կտորելը , գէշ
զրուցելը , սիրտը ծակելը , և ուրիշ ասոնց պէս բաներ :

10. Պատուիրանք . “ Ա՛ր շնար ” :

11. Պատուիրանք . “ Ա՛ր գողանար ” . սուտ խօսելով
հիլէ ընելն ալ , աղէկի գնով գէշ բան ծախելն ալ , մէկ

բանին արժեւէն եւէլ գին առնելն ալ, գիտնալով խալլ ստակ քելն ալ, ասոր տակը կը պարունակին:

Թ. Պատուիրանք. « Սի սուտ վկայեր ր: »

Ժ. Պատուիրանք. « Ընկերիդ և դրացինիդ և ուրիշ մարդու ունեցածին աչք մի դարներ ր: »

Այս պատուիրանքներուս ամենուն հիմը և արմատը ասոնք են, « Ընդ որ անձամբ և սրտիւ աստուած սիրէ. և ընկերդ քու անձիդ պէս սիրէ. և ի՞նչ բան որ ուրիշները չեն ուզեր որ քեզի ընեն, դուն ալ ուրիշներուն մի ըներ. ասոնք ճիշտ կատարելով ամեն պատուիրանք կատարած կրլաս ր: »

Հ. Ընկերդու պատուիրանքները ի՞նչ են:

Գ. ա. Կիրակի օրերը և կիրակի սահմանված օրերը՝ եկեղեցի երթալ պատարագ տեսնել. բ. Հիշ որ չէ՛նէ տարին անգամ մը ամեն մեղքը քահանային խոստովանիլ. գ. Խոնարհութեամբ և պարկեշտութեամբ հաղորդութիւն առնել գոնէ՛ տարին անգամ մը զատկին. զ. Կիրակի և տօն օրերը խանութ չի բանալ և չի բանիլ. Ե. Չորեքշաբթի և ուրբաթ և շաբթու պահք մեծ պահք գայ նէ՛ պահք բռնել:

Զ. Սեղքը քանի՞ կերպ է:

Գ. Կղզնական մեղք մը կայ՝ որ Ադամէն մեզի մընացած է. անիկայ մերին մերովելովը կը սորբբլի. բայց մեր դործած մեղքերը երկուք են՝ ներելի և մահացու: Ներելին թեթեւ մեղքերն են, որ կամ տրկարութիւնով և կամ չի գիտնալով չար բան մը կը գործենք. իսկ մահացուն ծանր ու մեծ մեղքերն են, որ մարդուս հոգին մեռցնելու պատճառ կրլան. և շատ անգամ մարմինին ալ:

Զ. Սահացու մեղքերը քանի՞ հատ են և ի՞նչ են:

Գ. Ըօթն են. ա. Հպարտութիւն. բ. Նախանձ.

4. Բարկութիւն . 4. Օուլութիւն . 5. Ազահութիւն .
 7. Որկրամուլութիւն . 5. Բղբախոհութիւն . և որքան
 մեղք կան նէ ասոնցմէ կելլեն :

Եւ ինչ մեղք որ չարութեամբ կրլայ , և մարդ
 մեղք ըլլալը գիտնալով , և իրեն ալ նոյն մեղքը գոր-
 ծած ըլլալը գիտնալով չի գղջար . որքան որ բանի տեղ
 չի դնէ նէ՝ անիկայ այն մարդուն հոգեւոր կորստեանը
 պատճառ , և մահացու մեղք կրլայ . մարդ մը պա-
 տուիրանքի դէմ բան մը ընէ , բայց դէմ ըլլալը չի
 գիտնայնէ , անիկայ ներելի մեղք է :

4. Ասոնց դէմ ինչ դեղ կայ :

9. Ամէն մէկին դէմ մէյ մէկ դեղ կան որ եօթն
 առաքինութիւններ կրավին :

Հպարտութեան մեղքէն հեռու կենալ ուզենք
 նէ՝ խոնարհ կրլանք միշտ մեր կենացը և ամէն գոր-
 ծերնուս մէջ , ուր որ գտնուելու ըլլանք , թէ և շատ
 բան գիտնանք և շատ բաներ ալ ունենանք :

Նախանձու մեղքէն հեռու կենալ ուզենք նէ՝
 միշտ եղբայրնիս ու ընկերնիս կր սիրենք , անոր աղէկ
 կուզենք , աղէկ կր խօսինք , ու աղէկ կրնենք . և անոր
 աղէկութեանը վրայ ալ կր խնդանք՝ թէ և անոր վը-
 րայի եղած աղէկութիւնը մեր վրայ ալ չունենանք :

Բարկութեան մեղքէն հեռու կենալ ուզենք
 նէ , հեզ կրլանք մեր ամէն գործերնուս մէջ , հան-
 գարտ ու խաղաղ կր վարվինք բոլոր ընկերներնուս
 հետ , միշտ ներող գրտնուելով անոնց մեզի ըրած ամ-
 մէն մէկ պակասութեանցը դէմ , թէ և մեր սիրտը ցա-
 ւեցընելու , և բարկութիւննիս շարժելու գործեր ալ
 ընեն :

Օուլութեան մեղքէն հեռու կենալ ուզենք նէ՝
 միշտ կաշխատինք աղէկութիւններ գործելու , ու հո-

